

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը

(Շար. տես. 1917 թվ. էջ 374):

Տանդէի գործին մէջ կը գտնենք ուրեմն իր բնաւորութեան ամբողջական արտայայտութիւնը: Գործէն կամ իրական անձէն, իսկոյն կը ծնանէր իր մէջը պատկերն ու խորհրդանիշը: Նոյն իսկ աստուածաբանական ու բանաւոր տեսութեանց վարդապետութիւնները՝ անձի կերպարանը կ'առնէին. ամբողջ քերթուածն ուրիշ բան չէ՝ բայց իրականութեան ու կեղծիքի խառն հիւստեած մը: Աշխարհիս վրայ կատարուած ո՛ր է քառամական ու իրական ղէպքերը՝ Աստուածային կատակերգութեան մէջ խորհրդապատկերի կերպարանափոխուած են:

Վիրգիլիոս՝ Տանդէի համար մարդկային գիտութեանց մարմնացումն էր, Պէթաթրիչէն՝ աստուածային իրերուն, թէ՛ մին ու թէ՛ միւսն ուրեմն պարզաբար խորհրդանիշներ էին: Երբեք երգերն երեք խորհրդանիշներ են, ու անոնց իւրաքանչիւր մասերը խորհրդապատկերներ են: Աստուածային կատակերգութեան մէջ գլխաւոր դերակատարը Տանդէն չէ. ինքը հանդիսատեսն է՝ որ կը դիտէ ու կը նկարագրէ. Վիրգիլիոսն ալ չէ, վասն զի երկրորդ երգէն վերջ՝ մանտուացի բանաստեղծը կ'անյայտանայ, և ո՛չ ալ Պէթաթրիչէն է, որովհետեւ ան բոլոր մը միայն կը տեսնուի քերթուածին սկիզբը և յետոյ երեւան կուգայ միայն Գաւառանին գազաթիւն վրայ: Գլխաւոր գործիչը՝ տիեզերքի ընդհանուր կարգն է, յաւիտենական արդարութիւնն է. Աստուած է գլխաւոր գործիչը. Դիոսիքին մէջ իսկ ախերոնեան դրան վրայ փորագրուած սարսափելի արձանագրութիւնը՝ աստուածային իմաստութիւնն է վնասուած է:


Յաւիտենական արդարութիւնը կը խօսի Պէթաթրիչէի, Ս. Հարց, զպրոցական աստուածաբաններու բերնով և վերջապէս կը խօսի Նա ինքնին, բայց այն աստե՛ն Տանդէ տեսեան կերպարանքի տակ կը լսէ անոր վսեմ լեզուն:

Նիւթական տիեզերքը, աշխարհը, Տանդէի համար տեսլարանն էր, մանաւանդ թէ քերթուածին թատերաբեմը, բայց պէտք էր ոգևորել այդ տիեզերքը, թատերական կերպարանք տալ անոր, և այն ժամանակ բանաստեղծը լեցուց զայն անձինքներով: Բայց դեռ պէտք էր արժանիքներու և յանձններու համեմատ անձինքը բաժնել, էւ հոս է որ կը սկսի Տանդէի ահագին աշխատութիւնը. դեռ ան բանաստեղծ չէ, հոգեխօս է՝ Մտքի սուրբ հետազոտութեամբ վերլուծած է մարդկային հոգիները, ըննած է անոնց խորին զաղտնիքները, այնպէս որ այն բոլոր պատմական անձնաւորութիւնք, որոնք անժխտելի ճշմարտութեամբ կ'երևին քերթուածին ընթացքին մէջ, մի առ մի ուսումնասիրուած են և իրենց առաքինութեանց կամ մեղքին համեմատ դասաւորուած են:

Ընթերցողը կ'երևակայէ, կը տեսնէ մեծ փլորենտացին գրասեղանին դարու վարին վրայ ռուս, հոգին գրչին ծայրը, ուշադիր գրելու մեռածներուն ու կենդանիներուն անունները, նշանակելով իւրաքանչիւրին յատուկ տեղն անդրժիբիմեան երեք թագաւորութեանց մէջ:

Եղեռնական ըննութիւնն յետոյ՝ բանաձեւեց Նա օրինագիրքն ու անկէ քաղեց տանջանքներուն հատուցման կարգը՝ որ Դիոսիքին մէջ անհուն արժէք ունի, և զոր Վիրգիլիոս բացատրած է Տանդէի առաջին երգերգոցին տաանեմէկերորդ երգին մէջ, միտայ Գաւառանին մէջ կայ փրկուած մեղաւորը, ոճիրը՝ որ կը ձգտի դուրս ելլել ոճրականութենէն ու կը բաղձայ մաքրագործութեան. և վերջապէս արդար հոգեւոր, այսինքն անոնք որ կը ստանան երանութեան զանազան աստիճանները, կ'երևնան Արքայութեան ինն երկինքներուն մէջ, և նաև հոն ալ վայելքն ընտրելին առաքինութեանց համեմատ է:

Յետ այս ուսումնասիրութեան, յետ այս



բաժանման, հարկ էր որ Տանդէն պատ-
մութեան դիւաններուն մէջ ընտրէր այն
անձինքը՝ որոնք բոլորն ալ ոճիրի զանազան
աստիճաններ կը ներկայացնէին. պէտք էր,
դատաստանէն առաջնորդուած, կանգնիլ
իրը ատենակալ բոլոր ծանօթ աշխարհին:
Վերջապէս բովանդակ մարդկութիւնն էր
որ՝ նման գետի մը՝ ծանրաքայլ կը հոսէր
դէպ ի անդրշիրիմեան աղջամուղջ ծովը,
անցքին առջև սպասուած բանաստեղծ դա-
տաւորէն:

Գեռ աւելին կայ: Հոն տակաւին կը տես-
նուի քերթուածին չափագիտական կարգը:
Թուաբանօրէն այդ կարգը պէտք էր
ներկայացնէր երրորդութիւնն մէկ անձի
մը մէջ, ասկից՝ երեք երգերգոցները մէկ
քերթուածին մէջ. իւրաքանչիւր երգերգոց՝
33 երգերէ բաղկացած՝ կ'ընեն 99, և
ոտանաւորին չափը նոյնպէս երեքտողեան
է: Երգերը սակայն հարիւր են, վասն զի
տանին քառակուսին հարիւր է, զոր իբրև
կատարեալ թիւ կը նկատէին հինները: Թէ՛
Դոժիքը, և թէ՛ Քաւարանն ու Արքայու-
թիւնն ինն շրջապատ ունին, և անոնց
մէջ եղած հեռաւորութիւնը հաստատուն
թիւ մ'է՝ միշտ իննով բաժանելի (405 մղոն):
Երբ Սանդարամետը կը հասնինք՝ հաշիւն
այլեւս չի համաձայնիր, վասն զի Դոժիքն
առաջուց նկատուած էր այնքան խոր՝
որչափ է երկրիս կիսատրամագիծը, և նոյն-
քան լայն մակերևոյթին վրայ: Այն ատեն
նոր հնարքներ՝ ինն թիւն ընդունելու հա-
մար իբր բաժանում. ահա թէ ինչո՞ւ համար
Սանդարամետը 81 մղոն (իննին քառա-
կուսին) է խորունկ:

Լաւ ուրեմն, ընթերցող, երբ Տանդէն
պատրաստուեցաւ առաջին երգերգոցին
առաջին տողը գրելու, արդէն իսկ ամբող-
ջապէս մտածած ու տրամադրած էր այդ
ծրագրուած կարգի, գիտի, ճարտարապե-
տութեան, քաշխուժի այս ահագին աշխա-
տութիւնը՝ ճշմարիտ փիլիսոփայէն, փոր-
ձառու չափագիտէն հաշուի առնուեցաւ:
Տանդէ ուրեմն նշանակած էր իր եր կապա-
յութեան որոշ սահմանները՝ որոնց մէջ
ման պիտի գար:

Խորհրդանշաններու բոլոր այս ահագին
խառնուածքը թուաբանօրէն հաւաքուեցաւ
ու ձուլուեցաւ հրաշալի քերթուածի մը
մէջ: Այս ահագին աշխատութիւնը՝ որ
հիացում կ'ազդէ մեզի ու կը հպարտացնէ՝
տեսնելով թէ մինչև ո՞ր բարձրութեան
կրնայ վերանալ մարդկային հոգին, կա-
տարուեցաւ Տանդէն ոչ վարդապետօրէն
ոչ հասարակ կամ թոյլ ոճով մը, այլ
համոզուած՝ վսեմ ու անզուգական բա-
նաստեղծութեամբ:

Իր առջև կար անսահման, մթին, օտա-
բասեռ անդունդը, ուր անոր ամենարարժ
հանճարին արարչագործ շունչը միայն
պէտք էր՝ դուրս քաշելու համար անկէ
երկրիս մեծագոյն քերթուածներէն մէկը:

Ինչպէս փոքրիկ բալուտն որ կը ճեղ-
քուի բունձին տակ, կ'ուղղէ իր ծիլը դէպ
ի երկինքն ու արմատները կը մխէ գետին
խորը, կը փթթի՝ կը զարգանայ մթնո-
լորտէն ու երկրէն ընդունելով այն բոլոր
տարրերը՝ որոնց պէտք ունի հրաշալի
ձև մը առնելու համար, այսպէս ալ Տանդէի
միտքը, իր ժամանակին ծանօթ պլարա-
նական, խորհրդանշանական, գիտական ու
մատենագրական բոլոր նիւթերը իւրացը-
նելով, հին զրոյցներն առաւ ու անոնցմէ
կերտեց ամենագեղեցիկ յուշարձաններուն
մէկը՝ որ երբէք ճանչցուած ըլլան:

Այս՝ մարդկային իմացականութեան իս-
կական հրաշք մ'եղաւ:

*
*

Բայց ինչպիսի՞ ծածուկ զօրութեամբ
կրցաւ ունենալ Տանդէ այսպիսի յստակ,
պայծառ ու ճշգրիտ պատկերացումներ:
Ու ի՞նչպէս գիտցաւ խօսքին արուեստով՝
արժարժէ կեանքը մոռեալներու աշխարհի
մը մէջ, ու կենդանացնել այդ աշխարհը
դիւցազներով, հրեշտակներով, դեւերով
ու ամէն տեսակ հրէշներով՝ այնպիսի պատ-
կերացնող պայծառ յստակութեամբ մը՝
որ ընթերցողն իրականութեան պատրանք
կ'ունենայ:

Բնութեան գաղտնիք, կը պատասխա-

նեմ, ջղային փափուկ զգայականութեան բնախօսական բարձր գաղտնիք, որ զինքը կ'ընէր սուր ու նուրբ, սրատես ու մարգարէ, այնպէս որ ինքը թափանցելով խորը տեսիլքի մը կամ ո՛ր և է երեւոյթի մ'ըմբռնման մէջ, կը յաջողէր կատարեալապէս զայն վերլուծելու, իւրացնելու զայն պատկերներով ու ամենայնպէս նմանութիւններով:

Ամէն օրուան, ամէն ժամուան այս տեղային, սաստիկ, յամառ աշխատութիւնը, շարունակուած մասնաւորապէս կորովի տարիներուն մէջ, այսինքն՝ երբ ամէն ըջիջ հիւթով թաթաղուն առաձգութեամբ յորդ ու զեղուն, կը դիզէ հանճարեղ բանաստեղծին ուղեղին մէջ ուժի այն անգին գանձը՝ զոր նա յետոյ պիտի թրթռացնէ հաստատուն կամքով, և երբ յարմար ժամը հասած է ու ո՛ր և է զգայական կամ իմացական յուզում մը վեհագոյն արարածին մէջ կը զրգո՛ւ յանկարծական սարսուռը, ջղային սերտ հիւստեամբ կը թըրթոյ իր անակնկալ ցնցմամբ մը, ու այն ատեն հանճարը կը ստեղծէ, այն ատեն՝ օղը թնդացնող ցայտումի մը ուժգնութեամբ՝ զսպուած զօրութիւնները դուրս ել ծայթերն ուժով, մինչև որ միշէ զօրութեան առաջին թափը հանդարտելով, որ ամէն յուզման բնական հետեանքն է, բանաստեղծն ուրիշ մարդու մը կը փոխուի

Վերաստեղծուած՝ ինչպէս բոյսերն աղածրի
Որ կը պընխին սաղարթներով նորածիւ,
Մաքուր ու կազմ ղէպ ի ստեղծելու հիւստեմ:

Կը նմանի ճիշդ Աւելանց բնակչի մը՝ որ մազըցելով մառախուղին մէջ՝ վերէն կը տեսնէ յանկարծ, ամպերու ճեղքուածէ մը, ձորը, դաշտագետինն ու ծովը մինչև հորիզոնին ծայրը, արեւէն ողողուած ու զուարթացած:

Բանաստեղծը կը հաւաքէ ներսը իր սեպչական ուժերուն ամբողջութիւնը. մշտեին աչքերը կ'ամփոփուին ներսը, կը լիտեն տպաւորութիւնները զորս իրերն ու ղէպքերը ըլած են յիշողութեան վրայ ու կ'երգէ:

Եւ այդ որոշ վայրկեանին է՝ որ յայտնի կ'ըլլայ անոր բնաւորութիւնը, վասն զի ան՝ իր ներքին տեսիլները բացատրելու համար կատարած ճիշտով՝ պիտի ըլլայ բանաստեղծ, քանդակագործ, նկարիչ ու երաժիշտ, այսինքն յաջորդաբար պիտի փոփոխէ ձևերը, գոյներն ու ձայներն այնչափ աւելի ճարտարութեամբ, որչափ աւելի բարձր ու բեղնաւոր ըլլայ հանճարը, որչափ աւելի ընդարձակ ու զօրաւոր երեակայութիւնը: Եւ որովհետեւ իր կատարեալ ջղային դրութիւնը տեսած ու զգացած է այն՝ զոր կարճատես աչքերն ու միջակ իմացականութիւնները չեն կրըցած տեսնել ու զգալ, իր ուղեղը, որ սրբազան սափոր մ'է խորհրդաւոր առեղծուածներու, կը յաջողի նորն ու անակրեւ կալը ձեռք բերելու, կու տայ մեղի վերջապէս ուրախութեան ու յաւելորձական գեղեցկութեան գործը. Աստուածային կատակերգութիւնը:

*
*

Տեսնենք հիմա, համառոտակի, թէ ի՞նչ ընթացք ունեցաւ բանաստեղծութիւնը Տանդէն վերջը: Այն ալ, նման միւս երկուսուհանդերձ, շարունակեց յառաջադիմութեան դանդաղ՝ բայց յարատեւ յեղաշրջումը, և վերջապէս կերպարանափոխ եղաւ մերթ ընդ մերթ յարմարելով ժամանակին բարքերուն ու մարդիկներուն նկատագրին՝ որոնք կը փոխուէին քաղաքակրթութեան յառաջադիմութեան հետ:

Սակայն ամենատնայնապէս անժխտելի է, որ քերթուածն այլեւ չի համապատասխաներ մեր դարուն տնդտու ու անհամբեր պահանջներուն, մինչդեռ տաղը, երգը, նուագը, եղերերգութիւնը, վերտառութիւնը, բաժակաճառը, սիրերգը, մէկ խօսքով, բոլոր համառոտ քերթուածներն աւելի ընդունելի ու զորժածական են:

Բանաստեղծութիւնը վերլուծական դարձած է. ան ալ չէ կրցած ազատիլ գիտական մեթոտէն՝ որ կը պահանջէ ճշմարտութիւն՝ որչափ որ կարելի է հասնիլ անոր, և

պարտաւորուած է յարմարիլ արդի կենաց պահանջներուն՝ որ կը պարտադրէ բացարձակ համառօտախօսութիւնը:

Հասկնալու համար այս մեծ ու արմատական կերպարանափոխութիւնը՝ պէտք է կարգաւ հինքրուն գործերն ու զանոնք բազմատեղ ժամանակակից բանաստեղծներուն գործերուն հետ:

Սիրոյ նուրբ մտածութիւն մը, բնական երևոյթի մը կամ գեղեցիկ իրի մը նկարագրութիւնը՝ հին բանաստեղծներու համար նուազի մը կամ ամբողջ երգի մը նիւթեր էին. ընդհակառակն այսօր մի և նոյն զաղափարը կ'արտայայտուի տաղի մը կամ վեցեակի մը մէջ մեծագոյն ազդեցութեամբ և յստակութեամբ, արդի բանաստեղծութիւնը վերջապէս յաջողած է ազատուելու երկարաբանութենէ:

Նաև պատկերները, որ ամէն բանաստեղծութեան զարդարանքի մասը կը կազմեն, հիմայ աւելի ճիշտ են, աւելի զաղափարին հետ կապ ունեցող՝ զոր անոնք կը պարզաբանեն. կը տեսնուի վերջապէս ժամանակակից բանաստեղծին մէջ զիտական զարգացման ազդեցութիւնը՝ որ ամէն տեղ ընդհանրացած է:

Բանաստեղծը կ'երգէ միշտ մի և նոյն կրքերը, կը բացատրէ նոյն երևոյթները, կը նկարագրէ նոյն գեղեցկութիւնները, բայց կը կատարէ զայն իրականին հետ պատշաճ կերպով մը, վասն զի իր գործածած նիւթն աւելի հարուստ ու աւելի այլազան է, նմանութիւնն աւելի հրապուրիչ, երաժշտութիւնն աւելի քաղցրանուազ:

Պիտութիւնն իրեն առջև բացած է ամենալայն ու չհետազօտուած ասպարէզ մը՝ զոր հին աշխարհը չէր ճանչնար, և պատմութիւնը հայթայթած է իրեն ստոյգ գիւցազներու լեզոն մը, այնպէս որ ան կրցած է թաղել ուրախութեամբ զառամած դիցաբանութեան աստուածներն ու կիսաստուածները:

Երեան եկած է ուրեմն աւելի ճշմարիտ, աւելի ճաշակաւոր ու մանաւանդ դաստիարակութեան աւելի յարմար արուեստ մը, վասն զի հաստատուած է ոչ եթէ առաս-

պելին՝ այլ ճշմարտութեան վրայ. կը հռչակէ ոչ եթէ դիքը՝ այլ մարդը:

Ուստի ինծի հաւաստի կը թուի՝ որ բանաստեղծութիւնը կը յայտնէ դարէ ի դար ժամանակամիջոցի մը հոգեկան վիճակը, և նաև այս ալ, ինչպէս ամէն ինչ որ մարդկային է, կը զիջանի ու կը յարմարի զայն արտադրող սերնդոց պահանջներուն:

Ձի կրնար ըսուիլ՝ թէ հին բանաստեղծութիւնն աւելի պատուական ըլլայ քան արդի բանաստեղծութիւնը, և ոչ ալ կարելի է նախագուշակել՝ թէ ապագայ բանաստեղծութիւնը լաւագոյն կամ չարագոյն ըլլայ հիմակուանէն. կարելի է միայն ստուգութեամբ հաստատել՝ թէ ան՝ ամէն ժամանակի մէջ, ամէն տեղոյ մէջ, եղած է ու պիտի ըլլայ հարազատ դուստրը ժամանակին ու ազգին որ զինքը յառաջ բերաւ:

A. PADOVAN

Թարգմ. Հ. Ս. ՏԵՐ-ՄՈՎՍԵՅԱՆ

Մ Տ Ք Ե Ր

— Կուսակցութիւնները անբաժան չարիք մ'են ազատ կառավարութիւններու համար. — ԴԸ ՏՈԿԸՎԻԼ:

— Մ'եր նախանձը աւելի տեսական է քան անոնց երջանկութիւնն որոնց դէմ կը նախանձինք. — ԼԱ ՌՕՇՖՈՒԿՈԼ:

— Հասարակական կարծիքը աշխարհը թագուհին է, վասն զի յիմարութիւնն ալ յիմարներու թագուհին է. — ՊԱՍԿԱԼ:

